## 4. ՀԱՎԱՊՏՈՒԿ ԿԱՄ ՀԱՎՈՒՑ-ՊՏՈՒԿ ՎԱՆՔ

*Գտնվում է Վերին Խաչենում (Մարտակերտի շրջան), Գառնաքար գյուղից հարավ, գետի աջ ափին, մի բարձր բլրի սուր գագաթին. մոտ է նաև Գանձասարին։*

*Վանքի անվան այս երկու ձևերն էլ հանդիպում են արձանագրությունների մեջ։ Հավապտուկը լեռան անունն է, իսկ վանքի եկեղեցիները՝ Ս. Աստվածածին և Ս. Գրիգոր Լուսավորիչ, հայտնի են դառնում միայն Իշխանուհի Վանենու ավետարանի հիշատակարանից (1232)[1]։*

*Գառնաքար գյուղը եղել է Խաղբակյանց կամ Պռոշյանց տոհմի նստոցը, իսկ Հավապտուկը՝ նրանց հոգևոր կենտրոնը և գերեզմանատունը։*

*Վանքի բոլոր շենքերն այժմ ավերակ են, առանց ծածկի։ Նկատվում են մի թաղակապ եկեղեցի, գավիթ և մի սրահ՝ այս երկուսի երկարությամբ, հարավից։ Գերեզմանատունը գտնվում է վանքի մոտ։*

**70. ԵԿԵՂԵՑՈՒ** *բարավորի վրա. 9 տող.*



ԹՒԻՆ :⸢Ո⸣ԺԲ: (1163) ԷՐ. ՅԻՇԽԱՆՈՒ|ԹԵ. ՀԱ-ՍԱՆԱ, ՈՐԴՈ ՎԱԽՏ|ԱՆԳԱ ԵՒ ԱՄՈՒՍՆՈ ՆՈ-ՐԱ ՄԱՄՔԱ|ՆԱ. ԵՍ ՅՈՀԱՆ ՔՎԵՐՈՐԴԻ Տ̅Ր̅. ԳՐԻԳ|ՈՐՈ ԵՒ ԳԵՈՐԳ ԵՂԲԱՒՐՈՐԴԻ ԵՒ ԱՅԼ ՄԻԱ|ԲԱՆՔՍ ՇԻՆԵՑԱՔ ԶԵԿԵ⸢Ղ⸣ԵՑԻ⸣ՔՍ Ի ՓՐԿ-ԿՈ|Ի̅Թ̅Ի̅. ՀՈԳՈՅ ՄԵՐՈՅ ԵՒ ՅԻՇ⸢ԱՏԱԿ⸣ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ. ՈՐՔ ԿԱՐԴ⸢Ա⸣Յ⸢Ք ՅԻ⸣ՇԵՑ⸢ԷՔ. Ի. Ք.Ս⸣:

*Հրատ. Բարխուդարյանց, 182։ Հովսեփյան I, 29։ Շահխաթունյանց II, 378, Հ. Օրբելի, Նշվ. ժող., էջ 37, որտեղ արձանագրությունը թվագրված է ճիշտ՝ ՈՁԲ (= 1233 թ., խմբ.)։*

**71. ԵԿԵՂԵՑՈՒ** *արևմտյան պատի հյուսիսային մասում 6 տող.*



ԵՍ ՅՈՀԱՆ, ԱՒԱԶՆ|ՈՐԴ Ս̅Բ̅. ՈՒԽՏԻՍ. ՇԻՆԵՑԻ ԶԵ|ԿԵ-ՂԵՑԻՔՍ ԵՒ ԿԱՐԳԵՑԻ :Բ: |ԱՒՐ. ՊԱՏԱՐԱԳ Տ̅Ր̅. ԳՐԻ-ԳՈՐԻ| Ի ՏԱՐՈՋՆ: ԿԱՏԱՐԻՉՔ| ԳՐՈՑՍ ԱՒՐՀՆԻՆ ՅԱ̅Յ̅. ԱՄԵՆ:

*Հրատ. Հովսեփյան, I, 29—30։ Հ. Օրբելի, Նշվ. ժող., էջ 38։*

**72. ԵԿԵՂԵՑՈՒ** *արևմտյան մուտքից վեր 16 տող.*



ՅԱՆՈՒՆ Ա̅Յ̅. ԵՍ|ԱԹԱՆԱՍ ՈՐ ԶԳ|ՈԳԻՆ ԵՐԿԻՐՆ ԳՆ|ԵՑԻ Ի ՀԱՒՈՑ ՊՏՈՒ|Կ ՏՎԻ. ՀԱՅՐ ԳՈՐ|Գ ԵՒ ԱՅԼ ՄԻԱԲԱ|ՆՔՍ ՏՎԻՆ Ի ՏԱ|ՐՈՒՄՆ :Գ: ԱՒՐ Պ|ԱՏԱՐԱԳ ՆՈՐ Կ|ԻՐԱԿԷԻՆ. ՈՐ ԶՀՈՂ|Ն ՅԵԿԵՂԵՑՈՅՍ ՀԱ|ՆԷ :ՅԺԸ: (318) ՀԱՅՐԱՊ|ԵՏԱՑ ՆԶՈ-ՎԱԾ Է ՄԵ|ՌԵԿԱՒՔ, ԿԵՆԴԱՆ|ԱՒՔ. ՈՎ ԶԺԱՄ ԽԱՓԱՆ|Է ԴԱՏԻ ՅԱ̅Յ̅.

---

[1] Ջալալյանց, II, 216, Գ. Հովսեփյան, *Խաղբակյանք*, III, 92։

*Ծանոթ. Հիշատակված ճայր Գորգը վանահայր Յոհանի ազգականն է և նրանից հետո՝ վանահայր, հետևաբար ժամանակով մոտ նրան, XII դարի վերջերը։*

*Հրատ. Բարխուդարեանց, 182 (չունի վերջին երեք տողը)։ Հովսեփյան, I, 30։*
*Հ. Օրբելի, Նշվ. ժող., էջ 38։*

***73. ԽԱՉՔԱՐ**, որ ընկած է վանքի գերեզմանատան մեջ. 6 տող.*



ԹԻ[Ն] :ՈԺԳ: (1164) ԷՐ. Ե[Ս] ԽՈՐԻՇԱՀ ԿԱՆԳՆ[Ե]ՑԻ
ԽԱՉՍ ԱՌՆ ԻՄԻ[Ց] ՔՈԻՐԴԻԿԱՑ:

*Հրատ. Հ. Օրբելի, Նշվ. ժող., էջ 40։*

***74. ԽԱՉՔԱՐ**, գտնվում է վանքի գերեզմանատան մեջ. ճակատին 5 տող.*



ԹԻԻՆ :ՈԺԶ: (1167) ԷՐ. ԵՍ ՏՐ. ԳՐ[Ի]ԳՈՐ[Ի] ԿԱՆ-
[Գ]ՆԷՑԻ ԶԽԱՉՍ Ի ՏԱՊԱՆԻ ԵՂ[Բ]ԱԻՐ Ի[Մ]ՈՅ ՑԱԻ-
ՍԻՓԱՑ. ՈՐՔ ԵՐԿՐՊ[Ա]ԳԷՔ ՑԱՂԱԻԹՍ Ց[Ի]ՇԵՑԷՔ:

*Հրատ. Հովսեփյան, I, 29, Հ. Օրբելի, Նշվ. ժող., էջ 41։*

***75. ԽԱՉՔԱՐ**, նույն գերեզմանատան մեջ, կոտրված մի քանի մասի. ստորին մասում հենյալ՝ երկար զգեստով և սաղավարտաձև գլխարկով, դիմացը կանգնած մարդ. սրանց մոտ.*



ԹԻ[Ի]Ս :ՈԼ: (1181) ԷՐ. ԵՍ ՎԱՐՀԱՄ ԿԱՆԳՆԵՑԻ Զ[ԽԱ-
ՉՍ] . . ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱ[ՆԱ] . . .

*Հրատ. Հ. Օրբելի, Նշվ. ժող., էջ 40։*

***76. ԽԱՉՔԱՐ**, մեծ, նույն գերեզմանատան մեջ, ստորին մասում հենյալ՝ խրված հողի մեջ. երևում է 7 տող.*



:ՈԼԳ: (1184). ԵՍ ՀԱՍ[Ա]Ն, ՈՐԴԻ Խ[ԱՂ]ԲԱԿԱՑ[Ի] ԿԱՆ-
[ԳԸՆ]ԵՑԻ ԶԽԱ[Չ]ԵՐՍ Ի Վ[Ե]ՐԱ ՏԱՊԱՆԻ:

*Հրատ. Հովսեփյան, I, 32, Орбели, 198, Հ. Օրբելի, Նշվ. ժող., էջ 40։*

***77. ԽԱՉՔԱՐ,** նույն գերեզմանատանը. Թևերի տակ և ստորին մասում 8 տող.*

ԵՍ | ՎԱ
Ս
Ա | Կ
ԿԱՆԳՆԵՑԻ
ՉԽԱՉՍԻՏԱ
ՊԱՆԻԵՂԲԱՒ
ՐԻՄՈՅԱԲՈՒ
ՍԻ·ԹԻՒՈԽ:

ԵՍ Վ.Ա|ՍԱԿ| ԿԱՆԳՆԵՑԻ| ՁԽԱՉՍ Ի ՏԱ|ՊԱՆԻ ԵՂԲԱՒ|Ր ԻՄՈՑ ԱԲՈՒ|ՍԻ. ԹԻՒ,Ն, :ՈԽ: (1191):

*Հրատ. Բարխուդարեանց, 182, Հովսեփյան, I, 32, Հ. Օրբելի, Նշվ. ժող., էջ 39,*

***78. ԽԱՉՔԱՐ,** մեծ և գեղաքանդակ. Նույն գերեզմանատան մեջ, Թևերի շուրջը և տակին 17 տող.*



ԹՈՒԱԿԱՆՆ :ՈՀԳ: (1224): Էր. |ԵՍ ՁԱ|ՁՈՒՒ, ՈՐԴԻ ԽԱ.Գ.ԲԱԿԱՑ| ԿԱՆԳՆ|ԵՑԻ ՁԽԱՉՍ Ի| ՏԱՊԱՆԻ Ո|ՐԴՒՈՑ| ԻՄՈՑ| ՍՆՊԱ|ՏԱ. |ՈՑՔ ԵՐԿ|ՐՊԱԳ Ն|Ք |ՑԱՂԱՒ|Թ|Ս ՑԻՇԵՑԷՔ|:

*Հրատ. Բարխուդարեանց, 182, Հովսեփյան, I, 32—33, Հ. Օրբելի, Նշվ. ժող., էջ 39,*

***79. ԽԱՉՔԱՐ,** մեծ և գեղաքանդակ, նույն գերեզմանատան մեջ, Թևերի շուրջը 12 տող.*

ՈՀ
Գ.
Թ | Է
ՈՒ | Ր
ԱԿԱՆ | ՋԱ
ԵՍ | ՌԿ
ՋՈՒ | ՆԵ
ԱՆԳ | ԽԱՉ
ՑԻՉ | ՍԻ
ՏԱ | ՊԱՆ
ՈՐԴՈՒՄ | ՈՅՀԱ
ԱՆ | Ա

:ՈՀԳ: (1224) ԹՈՒԱԿԱՆ Էր. ԵՍ ՋԱՋՈՒՌ ԿԱՆԳՆԵՑԻ ՁԽԱՉՍ Ի ՏԱՊԱՆԻ ՈՐԴՈ ԻՄՈՑ ՀԱ,Ս,ԱՆԱ:

*Հրատ. Հովսեփյան, I, 33, Հ. Օրբելի, Նշվ. ժող., էջ 39,*

*80.* ***ԽԱՉՔԱՐ,*** *նույն գերեզմանատան մեջ. ստորին մասում 6 տող.*

Ի ԹՈՂԱԵՍԽԱՐԻՓԿԱ
ՆԳՆԵՅԻՋԽԱՀ · · ՍՐ
ԴՈՅԻՄՈՅՍՄԲԱՏԱԵԻ
ՀԱՍԱՆԱՈՐ · · · · ·
· · · · · · · · · · · ·
ՈՐՔԵՐԿՐՊԱԳԷՔ · ·
· · · · · · · · · · · ·

Ի. Թ⌊Վ⌊ԻՆ⌋ :ՈՁԱ: (1232). ԵՍ ԽՈՐԻՓ ԿԱ|ՆԳՆԵՑԻ ԶԽԱՉ⌈ԵՐ⌉Ս ՈՐ|ԴՈՑ ԻՄՈՑ ՍՄԲԱՏԱ ԵՒ| ՀԱՍԱՆԱ. ՈՐ · |· · | ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ⌈ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ⌉:

*Հրատ. Հ. Օրբելի, Նշվ. ժող., էջ 41։*

*81.* ***ԽԱՉՔԱՐ,*** *ընկած է վանքից արևմուտք. մնացել է ստորին մասը, որտեղ և 3 տող.*

ԹԻ:ՈՂԵ:ՅԱՆՈՒՆԱՅՅԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ
ՀԱՍԱՆԱՅԵՍԳԷՒՈՐԳԿԱՆԳՆԵՅԻՋԽԱՉՍ
ԻՓՐԿՈՒԹԻՒՆՀՈԳՈՅԻՄՈՅ

Թ⌊Ի⌊Ի⌋. :ՈՂԵ: (1247). ՅԱՆՈՒՆ ԱՅ. ՅԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ| ՀԱՍԱՆԱՅ ԵՍ ԳԷ[Ի]ՈՐԳ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ| Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՈՑ ԻՄՈՑ:

**Ծանոթ.** *Գէիորգ հնարավոր է Գէւորգ կարդալ (խմբ.)։*
*Հրատ. Բարխուդարեանց, 183, Հ. Օրբելի, Նշվ. ժող., էջ 42։*

*81ա.* ***ԽԱՉՔԱՐ,*** *Գանձասար տանող ճանապարհի ձախ կողմում, 5 տող.*

Թ⌊Ի⌊ԻՆ⌋ :ՈԿ:*(*1211*)*. |ԵՍ ՊԱՏ|ՐՈՆԻԿ Կ|ԱՆԳՆԵՑ|Ի ԶԽԱՉՍ ՀՈԳ⌊ՈՑ ԻՄՈՑ⌋:
*Հրատ. Հ. Օրբելի, Նշվ. ժող., էջ 41։*

## 5. ԳԱՆՁԱՍԱՐԻ ՎԱՆՔ

XIII *դարի սկզբից Արցախի և համայն Աղվանքի հոգևոր կենտրոն-կաթողիկոսարան հանդիսացած այս նշանավոր վանքը գտնվում է պատմական Խաչեն գավառում, Խաչենագետի վերին հոսանքի մոտ, Վանք գյուղի հանդեպ բարձրացող լեռնաբազկի հարթ կատարին, գյուղից մոտ երկու կիլոմետր հարավ-արևմուտք։*

*Վանքի Գանձասար անունը առաջացել է այն լեռնաբազկի անունից, որի վրա գտնվում է։ Լեռնաբազուկն է այդպես կոչվել, որովհետև նրա շերտերում կան արծաթի երակներ, որոնք հնում արդյունահանվել են։*

*Գանձասարի վանքի ներկայումս կանգուն շենքերի մասին կան արձանագրական և մատենագրական տեղեկություններ։ Համաձայն այդ փաստերի, գլխավոր տաճարը հիմնարկվել է Հասան Ջալալ Դոլա իշխանի և իր մայր Խորիշահի կողմից՝ 1216թ., ավարտվել է 1238 թ. և օծվել՝ 1240թ.։ Սակայն նույն աղբյուրները մատնացույց են անում, որ վանքը հիմնարկվել է նախկինում շինված մի այլ հուշարձանի տեղում, որը մինչև 1216թ. հանդիսացել է Ջալալյան իշխանական տոհմի գերեզմանատունը։ Այս փաստը հաստատող հնագույն գրավոր աղբյուրը հայոց Անանիա կաթողիկոսի «Յաղագս ապստամբութեան տանն աղուանից» գրությունն է, ըստ որի 949թ. լուսավորչական և քաղկեդոնական վեճերը հարթելու նպատակով Անանիա կաթողիկոսը Խաչեն գավառում ժողով է գումարում՝ նշանավոր իշխանների և հոգևորականների մասնակցությամբ։ Պատգամավորների ցուցակում հիշատակված է նաև «Հայր Սարգիս՝ Գանձասարու վանական»[1]։ Ստ. Օրբելյանը այդ դեպքի նկարագրության մեջ վերոհիշյալ Սարգիս վանականին մեծարում է* եկեղեցապան *կոչումով[2]։ Գանձակեցին, որն իր «պատմութեան» մեջ առանձին գլուխ է նվիրել Գանձասարի վանքի շինությանը, գրում է.*

*«Շինեաց եկեղեցի մի գեղեցկազարդ յօրինուածով, գմբեթարդ . . . ի վանքն, որ կոչի Գանձասար . . . ի տեղի շիրմի հարցն իւրեանց»[3]։*

[1] *«Արարատ», 1896, էջ 42 և 1897, էջ 134։*

[2] *«Պատմութիւն նահանգին Սիսական», արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի, Թիֆլիս, 1911թ., էջ 279։*

[3] Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն հայոց, Երևան, 1961, էջ 269-270։*